ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-22/81-Հ1

28.11.2022թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-22/81 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «22» «12» 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Գագիկ Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՍԵՐՎԵՏ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ս. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2022թ նոյեմբերի 28-ին կնքված N ՀՀԿԳՄՆՄԱԾՁԲ-22/81 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 15.12.2022թ թիվ 1987-Ն որոշման 2-րդ կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին գլխավոր Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում Ծառայության մատուցման ժամկետը սահմանել՝ 2023 թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և իրականացվում է վերականգնման աշխատանքներին զուգահեռ՝ մինչև 2023 թ օգոստոսի 1-ը ներառյալ:

1.1.2 Հաստատել նոր վճարման ժամանակացույցը համաձայն սույն համաձայնագրի Հավելված 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 հավելվածը համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011041308 ՀՎՀՀ 02698732	«ՍԵՐՎԵՏ» ՍՊԸ, ք.Երևան, Սայաթ-Նովա 18, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ, Հ/Հ՝ 163048265793, ՀՎՀՀ՝ 02564257
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
---------- Գ. Սաֆարյան (ստորագրություն) Կ.Տ.	---------- Ս. Պողոսյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված թիվ 1
«22» «12» 2022 թ. կնքված
N ՀՀԿԳՄՄՆՄԱԾՁԲ-22/81-Հ1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ. համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով. ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111140/44	հեղինակային հսկողության ծառայություններ													158700

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գ. Սաֆարյան
(ստորագրություն) Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Ս. Պողոսյան
(ստորագրություն) Կ.Տ